# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

N 073- 288

0231-6-09-36

13 դեկտեմբերի 2011թ. — գ.Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ավագանու 2011թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 13 հերթական նիստի որոշումները:

Առդիր 18 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Գ.Գրիգորյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 11960-11
14 12 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

06 դեկտեմբերի 2011թ. Թիվ 68

# ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 13 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| 1. Նալբանդյան Ռուբեն | | | |
| 2. Իսրայելյան Արամ | | | |
| 3.Կնյազյան Արայիկ | | | |
| 4.Սերոբյան Աստուր | | | |
| 5.Շահբազյան Ավագ | | | |
| 6.Մկրտչյան Արթուր | | | |
| 7.Շահբազյան Աշոտ | | | |
| 8.Տերտերյան Արամ | | | |
| 9. Սադոյան Սևդին | | | |

Համայնքի ղեկավար՝ Գ.Գրիգորյան

2011 թվականի դեկտեմբերի 6
գ. Արշալույս

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արշալույս
գյուղական համայնքի ավագանու
2011 թվականի դեկտեմբերի 6-ի
թիվ 13 հերթական նիստի թիվ 68 որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1.Օրակարգի հաստատման մասին:

Զեկ. Ա. Առաքելյան

2.Համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 83-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Զեկ. Զ. Գրիգորյան

3. Համայնքի վարչական տարածքում 2012 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

Զեկ. Զ. Գրիգորյան

4.Համայնքի մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2012 թվականի դրույքաչափերի մասին:

Զեկ. Զ. Գրիգորյան

5.Համայնքի ղեկավարի աշխատակազմի, <<ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության և <<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինության աշխատակիցների 2012 թվականի թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:

Զեկ. Զ. Գրիգորյան

6.Համայնքի 2012 թվականի բյուջեի հաստատման մասին:

Զեկ. Զ.Գրիգորյան

7.Գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին:

Զեկ. Զ. Գրիգորյան

8. Դրամական օգնություն հատկացնելու մասին:

Զեկ. Զ. Գրիգորյան

9. Գումար հատկացնելու մասին:

Զեկ. Զ. Գրիգորյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

06 դեկտեմբերի 2011թ. Թիվ 69-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 83-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով.

ՈՐՈՇՈՒՄ Է `

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 24-ի <<Համայնքի 2011 թվականի բյուջեի հաստատման մասին>> թիվ 83-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. եկամտային մաս

ա. համայնքի վարչական տարածքում գտնվող հողի հարկը պակասեցնել 300.0 /երեք հարյուր հազար/ հազար դրամով

բ. համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարները պակասեցնել 3150.0 /երեք միլիոն հարյուր հիսուն հազար/ հազար դրամով

2. ծախսային մաս

ա. վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացման գումարից 5950.0 /հինգ միլիոն ինը հարյուր հիսուն հազար/ հազար դրամը վերադարձնել վարչական բյուջեի պահուստային ֆոնդ , համապատասխանաբար 08.2.3 խումբ ենթախմբի 5112 տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 5950.0 /հինգ միլիոն ինը հարյուր հիսուն հազար/ հազար դրամով

բ. վարչական բյուջեի պահուստային ֆոնդը պակասեցնել 5950.0 /հինգ միլիոն ինը հարյուր հիսուն հազար/ հազար դրամով, որից 2500.0 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ հազար դրամը բաշխել ծախսային հոդվածներին

գ. 01.1.1 խումբ ենթախմբի 4111 տնտեսագիտական հոդվածն ավելացնել 793.0 /յոթ հարյուր իննսուներեք հազար/ հազար դրամով

դ. 01.1.1 խումբ ենթախմբի 4131 տնտեսագիտական հոդվածն ավելացնել 19.0 /տասնինը հազար/ հազար դրամով

ե. 01.1.1 խումբ ենթախմբի 4212 տնտեսագիտական հոդվածն ավելացնել 600.0 /վեց հարյուր հազար/ հազար դրամով

զ. 01.1.1 խումբ ենթախմբի 4823 տնտեսագիտական հոդվածն ավելացնել 12.0 /տասներկու հազար/ հազար դրամով

է. 01.6.1 խումբ ենթախմբի 4239 տնտեսագիտական հոդվածն ավելացնել 250.0 /երկու հարյուր հիսուն հազար/ հազար դրամով

ը. 01.6.1 խումբ ենթախմբի 4267 տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 800.0 /ութ հարյուր հազար/ հազար դրամով

թ. 01.6.1 խումբ ենթախմբի 4269 տնտեսագիտական հոդվածն ավելացնել 200.0 /երկու հարյուր հազար/ հազար դրամով
ժ. 08.2.4 խումբ ենթախմբի 4237 տնտեսագիտական հոդվածն ավելացնել 300.0 /երեք հարյուր հազար/ հազար դրամով
ժա. 08.2.4 խումբ ենթախմբի 4269 տնտեսագիտական հոդվածն ավելացնել 250.0 /երկու հարյուր հիսուն հազար/ հազար դրամով
ժբ. 09.5.1 խումբ ենթախմբի 4511 տնտեսագիտական հոդվածն ավելացնել 150.0 /հարյուր հիսուն հազար/ հազար դրամով
ժգ. 10.7.1 խումբ ենթախմբի 4729 տնտեսագիտական հոդվածն ավելացնել 726.0 /յոթ հարյուր քսանվեց հազար/ հազար դրամով:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| 1.Նալբանդյան Ռուբեն | | | |
| 2. Իսրաելյան Արամ | | | |
| 3.Կնյազյան Արայիկ | | | |
| 4.Սերոբյան Ասատուր | | | |
| 5.Շահբազյան Ավագ | | | |
| 6.Մկրտչյան Արթուր | | | |
| 7.Շահբազյան Աշոտ | | | |
| 8.Տերտերյան Արամ | | | |
| 9. Սաղոյան Սնդին | | | |

Համայնքի ղեկավար՝ Գ.Գրիգորյան

2011 թվականի դեկտեմբերի 6
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

06 դեկտեմբերի 2011թ. ԹԻՎ 70-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի գյուղական համայնքի տարածքում 2012 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| 1. Նալբանդյան Ռուբեն | | | |
| 2. Իսրայելյան Արամ | | | |
| 3.Կնյազյան Արայիկ | | | |
| 4.Սերոբյան Ասատուր | | | |
| 5.Շահբազյան Ավագ | | | |
| 6.Մկրտչյան Արթուր | | | |
| 7.Շահբազյան Աշոտ | | | |
| 8.Տերտերյան Արամ | | | |
| 9. Սադոյան Սևդին | | | |

Համայնքի ղեկավար՝ Գ. Գրիգորյան

2011 թվականի դեկտեմբերի 6
գ. Արշալույս

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արշալույս
գյուղական համայնքի ավագանու
2011 թվականի դեկտեմբերի 6-ի
թիվ 70-Ն որոշման

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

   հիմնական օբյեկտների համար՝

   1)մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ.

   2)սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

   ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ տաս հազար դրամ.

   բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ.

   գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսան հազար դրամ.

   ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

   3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար դրամ.

   4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցողների օբյեկտների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

   1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում ՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության , ապա բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է հինգ հազար դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1)ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ հինգ հազար դրամ.

2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռասյակի համար՝ հինգ հազար դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ.

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի , շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները) խաղատները ժամը $24^{00}$-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ քսան հինգ հազար դրամ.

2)հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.

3)բաղնիքների (սաունաների ) համար՝ երկու հարյուր հազար դրամ.

4)խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

5)շահումով խաղերի կազմակերպման համար ՝երկու հարյուր հիսուն հազար դրամ.

6)վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

2)թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավել ծավալային տոկոս ) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

3)այլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուր դրամ.

4)դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ՝ մեկ հազար դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հազար հինգ հարյուր դրամ:

10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել հինգ հազար դրամ

11. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել հինգ հազար դրամ:

12. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել հինգ հազար դրամ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

06 դեկտեմբերի 2011թ. Թիվ 71-Ն

## ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով.

## ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի գյուղական համայնքի կողմից 2012 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| 1. Նալբանդյան Ռուբեն | | | |
| 2. Իսրայելյան Արամ | | | |
| 3.Կնյազյան Արայիկ | | | |
| 4.Սերոբյան Աստուր | | | |
| 5.Շահբազյան Ավագ | | | |
| 6.Մկրտչյան Արթուր | | | |
| 7.Շահբազյան Աշոտ | | | |
| 8.Տերտերյան Արամ | | | |
| 9. Սադոյան Սևդին | | | |

Համայնքի ղեկավար՝ Գ.Գրիգորյան

2011 թվականի դեկտեմբերի 6
գ.Արշալույս

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արշալույսի
գյուղական համայնքի ավագանու
2012 թվականի դեկտեմբերի 6-ի
թիվ 71-Ն որոշման

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի գյուղական համայնքի իրավասության շրջանակներում քաղաքացուն տրվող, ինչպես նաև հաստատվող փաստաթղթերի համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է`
1) համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը վավերացնելու համար` հինգ հազար դրամ.
2) համայնքի բնակիչ համարվող անձանց` տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու լիազորագիր հաստատելու համար` երեք հազար դրամ.
3) համայնքի բնակիչ համարվող անձանց` աշխատավարձի և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու լիազորագիր հաստատելու մասին` երեք հազար դրամ.
4) համայնքի բնակիչ համարվող անձանց` նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների` բանկային ավանդներ և փոստային առաքումներ (այդ թվում ` դրամական և ծանրոցային) ստանալու լիազորագիր հաստատելու համար` երեք հազար դրամ.
5) համայնքի բնակիչ համարվող անձանց բնութագիր տալու համար` երեք հազար դրամ.
2. Համայնքի տարածքում համայնքի բնակիչ համարվող անձանց մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է `
1) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանություն կազմակերպելու համար`աղբահանության վճար` մեկ տնտեսությանը ` երեք հազար դրամ:
3. Համայնքային ենթակայության ստեղծված դպրոցի երեխաների համար ծնողական վճար սահմանել` մեկ հազար դրամ.
1) բնակչության առանձին խմբերի համար վճարների արտոնություններ սահմանել հետևյալ չափերով`
ա. մեկ ընտանիքից երեխա դպրոց հաճախող երկու և ավելի երեխաների համար`75 տոկոսի չափով` յոթ հարյուր հիսուն դրամ.
բ. միակողմանի ծնողազուրկ երեխաների համար` 50 տոկոսի չափով` հինգ հարյուր դրամ.
գ. երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար` 25 տոկոսի չափով` երկու հարյուր հիսուն դրամ.
դ. զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների, ինչպես նաև առաջին կարգի հաշմանդամների երեխաների համար` 100 տոկոսի չափով:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

06 դեկտեմբերի 2011թ. Թիվ 72

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, <<ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ <<ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ>> ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով.

## ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի, <<ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>>համայնքային ոչ առևտրային կազմակերպության և <<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինության աշխատակիցների 2012 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| 1. Նալբանդյան Ռուբեն | | | |
| 2. Խրայելյան Արամ | | | |
| 3.Կնյազյան Արայիկ | | | |
| 4.Սերոբյան Աստուր | | | |
| 5.Շահբազյան Ավագ | | | |
| 6.Մկրտչյան Արթուր | | | |
| 7.Շահբազյան Աշոտ | | | |
| 8.Տերտերյան Արամ | | | |
| 9. Սադոյան Սևդին | | | |

Համայնքի ղեկավար՝ Գ.Գրիգորյան

2011 թվականի դեկտեմբերի 6
գ. Արշալույս

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Արշալույսի գյուղական համայնքի
ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 6-ի
թիվ 13 հերթական նիստի թիվ 72- որոշման

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 16

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

| N | Պաշտոնը | Պաշտոնի ծածկագիր | Թվաքանակը | Հաստիքը | Դրույքաչափը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | | 1 | 1 | 180000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | | 1 | 1 | 125000 |
| 3 | Համայնքի ղեկավարի օգնական | | 1 | 1 | 80000 |
| 4 | Աշխատակազմի քարտուղար | 1.2-1 | 1 | 1 | 120000 |
| 5 | Առաջատար մասնագետ | 3.1-1 | 1 | 1 | 115000 |
| 6 | Առաջին կարգի մասնագետ | 3.2-1 | 1 | 1 | 100000 |
| 7 | Երկրորդ կարգի մասնագետ | 3.3-1 | 1 | 1 | 80000 |
| 8 | Գործավար | | 1 | 1 | 70000 |
| 9 | Հավաքարար | | 1 | 1 | 50000 |
| 10 | Վարորդ | | 1 | 1 | 80000 |
| 11 | Պահակ | | 2 | 2 | 54000 |
| 12 | Էլեկտրիկ-փականագործ | | 1 | 1 | 55000 |
| 13 | Մեխանիզատոր | | 1 | 1 | 55000 |
| 14 | Եկեղեցու պահակ | | 1 | 1 | 54000 |
| 15 | Տնտեսվար | | 1 | 1 | 75000 |
| | Ընդամենը | | 16 | 16 | |

## ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՐԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 14
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| N | Պաշտոնը | | Թվաքանակը | Հաստիքը | Դրույքաչափը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Արվեստի դպրոց»համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն | | 1 | 1 | 75000 |
| 2 | Դաշնամուրի դասատու | | 5 | 5 | 35000 |
| 3 | Դհոլ-դուդուկի դասատու | | 1 | 1 | 35000 |
| 4 | Վոկալի դասատու | | 1 | 1 | 35000 |
| 5 | Նկարչության խմբավար | | 1 | 1 | 35000 |
| 6 | Շախմատի խմբավար | | 1 | 1 | 35000 |
| 7 | Նկարահանող օպերատոր | | 1 | 1 | 35000 |
| 8 | Մարզիչ | | 1 | 1 | 35000 |
| 9 | Գլխավոր հաշվապահ | | 1 | 1 | 50000 |
| 10 | Հավաքարար | | 1 | 1 | 35000 |
| | Ընդամենը | | 14 | 14 | |

## ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ>> ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 4
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| N | Պաշտոնը | | Թվաքանակը | Հաստիքը | Դրույքաչափ_ |
|---|---|---|---|---|---|
| 1 | <<Կրթություն և մշակույթ>>միացյալ տնօրինության տնօրեն | | 1 | 1 | 50000 |
| 2 | Գրադարանի վարիչ | | 1 | 1 | 50000 |
| 3 | Գրադարանավար | | 1 | 1 | 50000 |
| 4 | Գլխավոր հաշվապահ | | 1 | 1 | 32500 |
| | Ընդամենը | | 4 | 4 | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

06 դեկտեմբերի 2011թ. Թիվ 73-Ն

## 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՈՐՈՇՈՒՄ Է `

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերը ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| 1. Նալբանդյան Ռուբեն | | | |
| 2. Իսրայելյան Արամ | | | |
| 3.Կնյազյան Արայիկ | | | |
| 4.Սերոբյան Աստուր | | | |
| 5.Շահբազյան Ավագ | | | |
| 6.Մկրտչյան Արթուր | | | |
| 7.Շահբազյան Աշոտ | | | |
| 8.Տերտերյան Արամ | | | |
| 9. Սադոյան Սենդին | | | |

Համայնքի ղեկավար՝ Ջ. Գրիգորյան

2011 թվականի դեկտեմբերի 6
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ **ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ**

06 դեկտեմբերի 2011թ. Թիվ 74

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել գույքահարկի գծով արտոնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի բնակիչներին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| 1. Նալբանդյան Ռուբեն | | | |
| 2. Իսրայելյան Արամ | | | |
| 3.Կնյազյան Արայիկ | | | |
| 4.Սերոբյան Աստուր | | | |
| 5.Շահբազյան Ավագ | | | |
| 6.Մկրտչյան Արթուր | | | |
| 7.Շահբազյան Աշոտ | | | |
| 8.Տերտերյան Արամ | | | |
| 9. Սադոյան Սևդին | | | |

Համայնքի ղեկավար՝ Գրիգորյան

2011 թվականի դեկտեմբերի 6
գ. Արշալույս

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արշալույսի
գյուղական համայնքի ավագանու
2011թվականի դեկտեմբերի 6-ի
թիվ 74 որոշման

ՑՈՒՑԱԿ
ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Արտուշյան Գուրգեն Արտուշի –ՎԱԶ - 2101 մակնիշի 12 SS 460 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկ—126563 /հարյուր քսանվեց հազար հինգ հարյուր վաթսուներեք/ դրամ
2. Սայադյան Արմեն Գևորգի —ԳԱԶ -31105 մակնիշի 12 OO 001 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկ —19646 /տասնինը հազար վեց հարյուր քառասունվեց / դրամ
3. Մանուկյան Եգոր Կամսարականի — ՎԱԶ – 21013 մակնիշի 12 SO 430 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկ —6400 / վեց հազար չորս հարյուր/ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

06 դեկտեմբերի 2011թ. Թիվ 75

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքում 2011 թվականի նոյեմբերի 6-ից մինչև դեկտեմբերի 6-ը ընկած ժամանակահատվածում ընտանիքի անդամին կորցրած թվով 2 բնակչի հատկացնել 65000/վաթսունհինգ հազար / դրամ՝ համաձայն հավելված 1-ի :

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին և զոհված ազատամարտիկների ընտանիքներին հատկացնել դրամական օգնություն համաձայն հավելված 2-ի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| 1. Նալբանդյան Ռուբեն | | | |
| 2. Իսրայելյան Արամ | | | |
| 3.Կնյազյան Արայիկ | | | |
| 4.Սերոբյան Ասատուր | | | |
| 5.Շահբազյան Ավագ | | | |
| 6.Մկրտչյան Արթուր | | | |
| 7.Շահբազյան Աշոտ | | | |
| 8.Տերտերյան Արամ | | | |
| 9. Սադոյան Սևդին | | | |

Համայնքի ղեկավար՝ Գ.Գրիգորյան

2011թվականի դեկտեմբերի 6
գ.Արշալույս

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արշալույսի
գյուղական համայնքի ավագանու
2011 թվականի դեկտեմբերի 6-ի
թիվ 13 հերթական նիստի թիվ 75 որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀԱՏԿԱՑՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ

1. Թադևոսյան Արմեն Կառլենի - 65000 (վաթսունհինգ հազար) դրամ

2. Ալեքսանյան Հենրիկ Ալբերտի - 65000 (վաթսունհինգ հազար) դրամ

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արշալույսի
գյուղական համայնքի ավագանու
2011 թվականի դեկտեմբերի 6-ի
թիվ 13 հերթական նիստի թիվ 75 որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ՀԱՏԿԱՑՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ

1. Խալիտով Ալի Ամոյի - 33000 / երեսուներեք հազար / դրամ
2. Մնացականյան Պուշկին Վիրաբի - 33000 / երեսուներեք հազար / դրամ
3. Աթոյան Բասե Մրազի -33000 / երեսուներեք հազար / դրամ
4. Պապեյան Մարգարիտ Գարուշի - 44000 / քառասունչորս հազար/ դրամ
5. Բեգլարյան Ռաֆաել Արտաշեսի - 44000 / քառասունչորս հազար/ դրամ
6. Մանուկյան Կարինե Հովհաննեսի- 44000 / քառասունչորս հազար/ դրամ
7. Մեղրակյան Սամվել Հրայրի- 33000 / երեսուներեք հազար / դրամ
8. Ավագյան Նվեր Շահզադայի – 33000 / երեսուներեք հազար / դրամ
9. Հովհաննիսյան Անժիկ Ռազմիկի - 33000 / երեսուներեք հազար / դրամ
10. Գևորգյան Արթուր Գևորգի - 44000 / քառասունչորս հազար/ դրամ
11. Օրդաքյան Գյուլվարդ Աշոտի - 22000 / քսաներկու հազար/ դրամ
12. Ներսիսյան Ծովինար Վարագդատի – 22000 / քսաներկու հազար/ դրամ
13. Կոստանյան Միրաբիի Էլիզբարի- 22000 / քսաներկու հազար/ դրամ
14. Ռասոյան Զարիֆ Խաչոյի – 22000/ քսաներկու հազար/ դրամ
15. Ասատրյան Ռուզաննա Զավենի- 22000/ քսաներկու հազար/ դրամ
16. Գրիգորյան Քնարիկ Սոցիալիզմի – 22000 / քսաներկու հազար/ դրամ
17. Միրզախանյան Սաթիկ Մանուկի – 22000 / քսաներկու հազար/ դրամ
18. Սարգսյան Սուսաննա Միասնիկի- 22000 / քսաներկու հազար/ դրամ
19. Կիրակոսյան Սիմոն Հրաչիկի - 22000 / քսաներկու հազար/ դրամ
20. ՈՒռուտրյան Զինե Սուրիկի- 22000 / քսաներկու հազար/ դրամ
21. Քալոյան Ազնիվ Ալիի- 22000 / քսաներկու հազար/ դրամ
22.Պետրոսյան Հայաստան Հովսեփի – 22000 / քսաներկու հազար/ դրամ
23. Իսրաելյան Մարետա Կոծիկի- 22000 / քսաներկու հազար/ դրամ
24. Մանուկյան Հովհաննես Զավիկի- 35000 / երեսունհինգ հազար / դրամ
25. Ավագյան Կարլեն Վահանի – 40000 /քառասուն հազար/ դրամ
26. Ալեքսանյան Համլետ Ռազմիկի- 100000 / հարյուր հազար/ դրամ
27. Շահբազյան Արմենակ Մայիսի- 100000 / հարյուր հազար / դրամ
28. Դավթյան Հասմիկ Վարդանի – 50000 / հիսուն հազար / դրամ
29. Գրիգորյան Մարինա Ախանի- 50000 / հիսուն հազար / դրամ
30. Սայադյան Արմեն Գևորգի - 100000 / հարյուր հազար / դրամ
31. Սարդոյան Սաշա Սամանդի -110000 / հարյուր տաս հազար/ դրամ
32. Առաքելյան Լյովա Ալբերտի- 100000 / հարյուր հազար/ դրամ
33. Թևանյան Մերուժան Արշամի – 95000 / իննսունհինգ հազար/ դրամ
34.Գրիգորյան Ժիրայր Լոգիկի – 95000 / իննսունհինգ հազար / դրամ
35. Հովհաննիսյան Գերասիմ Գուրգենի – 84000 /ութսունչորս հազար / դրամ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

06 դեկտեմբերի 2011թ. Թիվ 76

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի հինգերորդ մասով.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի կենտրոնական փողոցը ամանորի և սուրբ ծնունդի կապակցությամբ զարդարելու նպատակով լույսերի, խաղալիքների ձեռք բերման համար հատկացնել 400000/չորս հարյուր հազար/ դրամ գումար:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի մանուկների համար ամանորյա նվերներ ձեռք բերելու նպատակով հատկացնել 300000/վեց հարյուր հազար/ դրամ գումար:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի Սամվել Գրիգորյանի անվան ՊՈԱԿ միջնակարգ դպրոցի տարրական դասարանի աշակերտներին Հանս Քրիստիան Անդերսենի <<Ձյունե թագուհին>> մանկական վառցե թատրոնի տոմս նվիրելու համար հատկացնել 294000/վեց հարյուր հազար/ դրամ գումար:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի մանուկների համար 2011 թվականին ամանորի միջոցառում կազմակերպելու նպատակով հատկացնել 400000 /չորս հարյուր հազար/ դրամ գումար:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքում 2011 թվականին ամանորի կապակցությամբ միջոցառման համար ճարճատուկ ձեռք բերելու նպատակով հատկացնել 250000/ երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի <<ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության շախմատի խմբավարի մատուցած ծառայությունների դիմաց հատկացնել 18250 /տասնութ հազար երկու հարյուր հիսուն/ դրամ գումար:
6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքում 2011 թվականի հոկտեմբերի 24-ից մինչև դեկտեմբերի 1-ը ծնված թվով 5 երեխաների ծնողներին հատկացնել 20000 /քսան հազար/ դրամ գումար համաձայն հավելվածի:
7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի գիշերային լուսավորությունն ապահովելու համար լուսարձակ ձեռք բերելու համար հատկացնել 200000 /երկու հարյուր հազար/ դրամ գումար:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| 1. Նալբանդյան Ռուբեն | | | |
| 2. Իսրայելյան Արամ | | | |
| 3.Կնյազյան Արայիկ | | | |
| 4.Սերոբյան Ասատուր | | | |
| 5.Շահբազյան Ավագ | | | |
| 6.Մկրտչյան Արթուր | | | |
| 7.Շահբազյան Աշոտ | | | |
| 8.Տերտերյան Արամ | | | |
| 9. Սադոյան Սեդին | | | |

Համայնքի ղեկավար՝ Զ.Գրիգորյան

2011 թվականի դեկտեմբերի 6
գ.Արշալույս

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արշալույս
գյուղական համայնքի ավագանու
2011թվականի դեկտեմբերի 6-ի
թիվ 13 հերթական նիստի թիվ 76 որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ

1. Խալիլյան Սամվել Միրսադինի – 20000 /քսան հազար/ դրամ
2. Մանուկյան Երջանիկ Մեխակի – 20000 /քսան հազար/ դրամ
3. Սիմոնյան Սեյրան Սամվելի – 20000 /քսան հազար/ դրամ
4. Թարաբյան Ռուբիկ Պետրոսի – 20000 /քսան հազար/ դրամ
5. Տերտերյան Կարեն Եղնազարի– 20000 /քսան հազար/ դրամ